## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

*Ս. Զատկի հրաշափառ տօնին առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ Եկեղեցւոյ Սրբազան Պետերուն յղուած են հետեւեալ շնորհաւորական հեռագիրները։*

Երուսաղէմ, 23 Մարտ 1989

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց
Ս. Էջմիածին

Ս. Զատկի հրաշափառ տօնին բարեբաստիկ առիթով, խոնարհաբար կը ներկայացնենք Ձերդ Սուրբ Օծութեան մեր և Սրբոց Յակոբեանց Միաբանութեան սրտագին շնորհաւորութիւնները, խնդրելով Բարձրեալն Աստուծմէ որ շնորհէ Ձեզ յաջողութիւններով լի երկար և առողջ կեանք, և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ անսասանութիւն և բարգաւաճում։

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 23 Մարտ 1989

Նորին Սրբութիւն
Յովհաննէս–Պօղոս Բ. Պապ
Վատիկան

Ս. Զատկի հրաշափառ տօնին բարեբաստիկ առիթով, յարգանօք կը ներկայացնենք Ձերդ Սրբութեան մեր սրտագին շնորհաւորութիւնները, մաղթելով Ձեզ շարունակական առողջութիւն և Ձեր մեծ եկեղեցիին՝ բարգաւաճում։ Թող Ամենակարողն Աստուած յաջողութեամբ պսակէ Ձեր բարի ջանքերն ու ծրագիրները։

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 23 Ապրիլ 1989

Ն. Ամենապատուութիւն Պիմէն
Պատրիարք Համայն Ռուսիոյ
Մոսկուա

Ս. Զատկի հրաշափառ տօնին առիթով, կը ներկայացնենք Ձեզ մեր եղբայրական և ջերմ շնորհաւորութիւնները, սրտագին մաղթանքներով Ձերդ Սրբութեան առողջութեան և բարգաւաճ գործունէութեան համար։

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

digitised by A.R.A.R.@